

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված
«Աջակցություն Հայաստանի տարածքային զարգացմանը»
ֆինանսավորման համաձայնագրի վերաբերյալ**

Դրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանի տարածքային զարգացմանը» ֆինանսավորման համաձայնագիր

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 2016թ. դեկտեմբեր

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 2016թ. դեկտեմբեր

Համաձայնագրով նախատեսված գումարը՝

9,9 միլիոն եվրո, որից՝ 6,6 միլիոնը ԵՄ, 1.6 միլիոն եվրո շահառուներ

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 2021 թվականի 1-ին կիսամյակ

Ըստ համաձայնագրի տրամադրված դրամաշնորհային ծրագրերի անվանումները՝ ԵՄ ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվում են տարածքային զարգացման հետևյալ 8 պիլոտային ծրագրերը.

- Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը, «Շեն» ՀԿ
ԵՄ ֆինանսավորում՝ 1,340,995.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 225,000.0 եվրո,
- Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում, «Ինովացիոն կենտրոն» Հիմնադրամ
ԵՄ ֆինանսավորում՝ 750,000.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 127,500.0 եվրո,
- Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես հիմնական նախապայման տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման համար, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»
ԵՄ ֆինանսավորում՝ 1,604,808.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 280,842.5 եվրո,
- Բնապահպանական մարտահրավերների վերաժումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում, Կապանի համայնքապետարան
ԵՄ ֆինանսավորում՝ 749,963.55 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 127,494.52 եվրո,
- Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն, «ԻԴԵԱ» Հիմնադրամ,

ԵՄ ֆինանսավորում՝ 1,194,890.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 195,000.0 եվրո,

- ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով, Ֆլորենցիայի համալսարանի Իտալական ուսումնահետազոտական կազմակերպություն,

ԵՄ ֆինանսավորում՝ 2,084,951.71 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 375,000.0 եվրո,

- Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում, «Համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ

ԵՄ ֆինանսավորում՝ 1,626,333.33 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելի, քան 243,950.0 եվրո,

- Ամասիայում բրոյա թելերի և կտորի արտադրություն, Ամասիայի համայնքապետարան, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ

ԵՄ ֆինանսավորում՝ 549,819.00 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին, քան 87,970.0 եվրո:

Ծրագրի նպատակը՝ Դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակը մի շարք պիլոտային ծրագրերի ֆինանսավորումն է, գործողությունների իրականացումը, որը կաջակցի և կզարգացնի տարածքային/տեղական սոցիալ-տնտեսական պայմանները՝ անդրադառնալով երկու կարևոր խնդրի. Մարզային զարգացման ծրագիրը և ՏԱ թիմի կողմից իրականացրած կարիքների գնահատումը: Դրամաշնորհային ծրագրի նպատակներում հաշվի կառնվեն նաև ազգային մակարդակով հաստատված ոլորտային ռազմավարությունները

Ակնկալվող արդյունքները՝ նախատեսվում է ստեղծել շուրջ 500 աշխատատեղ, ինչպես նաև բարձրացնել 300-ից ավելի ձեռնարկությունների մրցունակությունը

Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.12.2020թ. դրությամբ՝ Տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագրի (ՏՁՊԴԾ) շահառուներին վճարվել է մոտ 1.4 միլիոն եվրո համաֆինանսավորում, ինչը կազմում է ԵՄ ընդհանուր դրամաշնորհի առավելագույն արժեքի 87.5% -ը:

Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝ Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 500 աշխատատեղեր, բարձրացվել է շուրջ 700 ձեռնարկությունների մրցունակությունը:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: